

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

- 33) Ինչպէս կըտորներն Հայելոյն կոտրած՝
Կը վերածեն մէկ պատկեր Հազարի,
Կըտորներն որքան ըլլան բազմացած,
Կը շատնայ նոյնքան թին ալ պատկերի,
Վիճակը նոյնն է կոտրած սըրտերի,
Եթէ չը լըքեն այդ վիշտը անհուն,
Պիտ՝ ունենան պաղ, անարին մաշած
Անքուն ցաւերով կանուխ ծերութիւն,
Չի կոտրած կոտորներ չեն կըրնար կըրել վըշտին ծանրութիւն:
- 34) Իրաւ կեանք կայ մեր վըհատութեան մէջ,
Կենսունակութիւն թոյնի - արմատն, որ
Մահացու ճիւղերն կերակրելէ վերջ,
(Քի իրեն մեր մահն է անկարելորդ)
Կ'վարժեցնէ կեանքն՝ ցափ պտղին գարշելի
Ինչպէս խընձորներն մեռեալ Ծովեզրի,
Որ, երբ ուտես՝ Համն մոխրին է շէջ.
Մարդ թէ հաճոյքին համար լոկ կ'ապրի,
Քանի ժամ է կեանքն իր թէ հաշուեն վաթսուն տարի:
- 35) Սաղմոսերգուն հաշուեց տարիներն մարդուն,
Անոնք կը բաւեն: Թ'ըսածն իրաւ է՝
Թըզաչափին այդ դըժկամ եղար դուն
Մահաբեր Ուաթըրլու Անունը բաւ է . . .
Միլիոն բերաններ քեզ կը պարսաւեն.
Նորածիններուն ալ կը տրուին աւանդ . . .
Հոն քաշեցին սուրն Միացեալ ազգերն,
Մեր ազգակիցքն ալ Ռազմիկ էին անդ:
Այսքան բաւ է, թող մընայ այս միշտ անվըկանդ:
- 36) Ոչ ամէնէն վատ, Մարդոց էն մեծն բայց
Ընկաւ, իր հոգի խառն հակատուօրէն
Մերթ հըզօր՝ սակայն միշտ մօտէն փակած
Չընչին իրերու ամրակոտօրէն.
Ծայրայեղ միշտ, բայց թինքզինք չափատրեր՝
Գահն իրեն կը մնար, կամ գոյ չէր ըլլար,
Յանդըգնութիւն զինք կը տանէր վեր, վար . . .
Այժմ իսկ կ'ուզէր Կայսըր մը դառնալ,
Որոտումով ժաժքի մատնել նորէն աշխարհ:

(Ջարունակելի)

LORD BYRON

Թրգմն. Մուրատ Մանուկեան